Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 30 -ի N 887 - Ա
որոշման

«ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻՆ»
Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած բնակչության կարիքներին արձագանքելու ջանքերին՝ տրամադրելով հումանիտար օգնություն՝ հիգիենիկ, կենցաղային պարագաներ, և սոցիալ-հոգեբանական օժանդակություն: |
| 2. | Ծրագրի բարեգործական ոըակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Դանիական Կարմիր խաչ, ք. Կոպենհագեն Բլեգդամսվեյ 27, հեռ +45 3525 920019 |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան և ՀՀ մարզեր,<br>Բնագավառը՝ սոցիալական, առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 51,031,650 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն ժամանած 2600 անձինք, 600 երեխաներ և 200 ծնողներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 10. 12.2020 – 15. 03.2021 թթ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝<br>1. Հումանիտար աջակցության տրամադրում Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետու-թյուն ժամանած և ժամանակավոր կացարաններում բնակվող բնակչության սոցիալապես անապահով անձանց, ինչը ներառում է հիգիենիկ և կենցաղային պարագաների ձեռքբերում,, տեսակավորում, փաթեթավորում, տեղափոխում և բաշխում /բյուջե՝ 34,780,000 դրամ, ժամանակահատված՝ 10. 12.2020 – 15.03.2021 թթ. : |

| | | |
|---|---|---|
| | | 2. Սոցիալ-հոգեբանական օժանդակություն, ինչը ներառում է հոգեբանական առաջին օգնության և խորհրդատվության տրամադրում Լեռնային Ղարաբաղից ժամանած և ժամանակավոր կացարաններում բնակվող կարիքավոր ազգաբնակչությանը. /բյուջե՝ 1,242,000 դրամ, ժամանակահատված՝ 10. 12.2020 – 15. 03.2021 թթ :<br>3. Երեխաների կայուն զարգացմանը նպաստող ինտերակտիվ դասընթացների և սոցիալականացման միջոցառումների կազմակերպում Լեռնային Ղարաբաղից ժամանած երեխաների համար /բյուջե՝ 7,390,850 դրամ, ժամանակահատված՝ 10. 12.2020 – 15. 03.2021 թթ/:<br>4. Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 7,618,800 դրամ, ինչը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 4,638,800 դրամ արժողությամբ, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայություններ՝ 800,000 դրամ արժողությամբ, ՀԿԽԸ տեսանելիության համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերում՝ 200,000 դրամ արժողությամբ, հեռահաղորդակցման ծառայությունների ձեռքբերում՝ 320,000 դրամ արժողությամբ, աուդիտի իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 1,100,000 դրամ արժողությամբ, և մոնիտորինգի համար օրապահիկ՝ 560,000 դրամ արժողությամբ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1. Անկողնային պարագաների ձեռքբերում՝ 26,280,000 դրամ արժողությամբ<br>2. Ջեռուցիչների ձեռքբերում՝ 7,000,000դրամ<br>3. Բեռնատար մեքենաների վարձակալության և բեռնափոխադրման ծառայությունների ձեռքբերում՝ 700,000 դրամ արժողությամբ<br>4. Երեխաների մասնակցությամբ ինտերակտիվ դասընթացների համար գրենական և այլ կրթական պարագաների ձեռքբերում՝ 1,280,850 դրամ արժողությամբ<br>5. Երեխաների մասնակցությամբ ինտերակտիվ դասընթացների և սոցիալականացման միջոցառումների համար սննդի ձեռքբերում՝ 3,000,000 դրամ արժողությամբ<br>6. Երեխաների համար ժամանցային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերում՝ 1,020,000դրամ արժողությամբ:<br>7. Երեխաների համար ուղևորափոխադրման ծառայությունների ձեռքբերում 800,000 դրամ արժողությամբ:<br>8. Հոգեբանների ծառայությունների ձեռքբերում՝ 378,000 դրամ արժողությամբ: |

| | | |
|---|---|---|
| | | 9. Մարզեր այցելությունների ժամանակ հոգեբանների համար հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում՝ 864,000 դրամ արժողությամբ<br>10. Հեռահաղորդակցության ծառայությունների ձեռքբերում՝ 320,000 դրամ արժողությամբ<br>11. Կարմիր խաչի լոգոյով տպագրական ծառայությունների ձեռքբերում՝ 200 000 դրամ արժողությամբ<br>12. Աուդիտի իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 1,100,000 դրամ արժողությամբ<br>13. Կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայություններ՝ 800,000 դրամ արժողությամբ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի կազմակերպական և պահպանման ծախսեր՝ 7,618,800 դրամ, ինչը ներառում է ծրագրի անձնակազմի աշխատավարձերը՝ ներառյալ հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ 4,638,800 դրամ արժողությամբ, կոմունալ և գրասենյակային սպասարկման ծառայություններ՝ 800,000 դրամ արժողությամբ, ՀԿԽԸ տեսանելիության համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերում՝ 200,000 դրամ արժողությամբ, հեռահաղորդակցման ծառայությունների ձեռքբերում՝ 320,000 դրամ արժողությամբ, աուդիտի իրականացման ծառայությունների ձեռքբերում՝ 1,100,000 դրամ արժողությամբ և մոնիտորինգի համար օրապահիկ՝ 560,000 դրամ արժողությամբ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում հաստատվելու է սերտ համագործակցություն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների, մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել հաշվետվություններ Դանիական Կարմիր խաչին, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է գործունեության անմիջական վերահսկում: Նաև ՀՀ Կառավարության 2003 թ. հունվարի 16 N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ԱՎԻՆՅԱՆ